ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«02» 11 2020 թ. Երևան № 126

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 38 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ Սևակ Հովհաննիսյանի անդամությունը դադարեցնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հոկտեմբերի 30-ի N 390-Ա հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 23-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի N 24 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45 հրամանի 15-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի անդամ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Սրբուհի Գալյանին՝ 3 տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր

դատախազի 2015 թվականի փետրվարի 24-ի N 8 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 38 հրամանի 1-ին կետում՝

«Սևակ Հովհաննիսյան - Երևան քաղաքի դատախազ»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

«Սրբուհի Գալյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝ **Ա.ԱՖԱՆԴՅԱՆ**